Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 20-06-2022 թ. որոշմամբ
«ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԵՎ ՈՒՏԻԼԻԶԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԵՎ ՈՒՏԻԼԻԶԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 67
1.3 Պետական գրանցման համարը		222.160.796122
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2014-01-17
1.5 ՀՎՀՀ-ն		02624482
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)11557080
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		office.fdd2013@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Քնարիկ Դավթյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	2	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ականազերծման աշխատանքների կատարման ծրագրեր	140,548,026
	Նվիրատվություն	5,000,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Նվիրատվություն	60,000
9. Հիմնադրի ներդրումը՝		

DAVTYAN KNARIK 6807760469
Digitally signed by DAVTYAN

9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Ականազերծման աշխատանքների կատարման ծրագրեր	141,372,545	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	182,693,690	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	141,372,545	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 18 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

AVC
Consulting&Audit

ՀՀ , ք Երևան Նուբարաշեն, 10 փող, տուն 6
ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1
Հեռ: (010) 57 28 46
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ 048,
ՏՐՎԱԾ ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ -02.08.2006թ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԿ ԱՆԴԱՄ,
ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ՝ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29, ՀԳԳՀ՝ 1 20 0440

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Ականագերծման և ուտիլիզացիայի» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ականագերծման և ուտիլիզացիայի» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՓՄԿ-ի ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-Վարքագիրք) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն,

զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին՝ դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ::

24 մայիսի 2022թ.

Գլխավոր տնօրեն՝ *Մեսիկ Պետրոսյան*

Աուդիտոր՝ *Արթուր Մխիթարյան*

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎ			
Հիմնական միջոցներ	4	48 469	9 924
Հետաձգված հարկային ակտիվներ	16	460	237
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**48 929**	**10 161**
Պաշարներ	5	8 363	1 407
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	1 754	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	25 311	22 820
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**35 428**	**24 227**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**84 357**	**34 388**
ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կուտակված արդյունք		74 954	26 588
Ընդամենը զուտ ակիվներ		**74 954**	**26 588**
Ակտիվներին վերաբերող շնորհներ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**-**	**-**
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	221	1 067
Եկամուտներին վերաբերող շնորհներ	8	3 813	2 478
Շահութահարկի գծով պարտավորություններ		2 814	2 938
Պահուստներ	10	2 555	1 317
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**9 403**	**7 800**
ԸՆԴԱՄԵՆԸ ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**84 357**	**34 388**

Տնօրեն՝ Ք.Դավթյան

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2022թ. մայիսի 24-ին: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: Էջ 8-19:

Գործունեության մասին հաշվետվություն
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հասույթ	11	40 500	19 748
Վաճառքի ինքնարժեք	11	(24 998)	(8 377)
Համախառն շահույթ (վնաս)		**15 502**	**11 371**
Վարչական ծախսեր	12	(27 249)	(18 167)
Այլ եկամուտ	13	144 836	83 488
Այլ ծախսեր	13	(78 790)	(62 784)
Ֆինանսական եկամուտներ	14	1 004	1 231
Ֆինանսական ծախսեր	14	(4 346)	-
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկը		**50 957**	**15 139**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	15	(2 591)	(2 764)
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)		**48 366**	**12 375**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		**48 366**	**12 375**

Տնօրեն՝ Ք.Դավթյան

Գործունեության մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 8-19)

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2020թ հունվարի 1-ի դրությամբ	**14 213**	**14 213**
Տարվա արդյունք	12 375	12 375
2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**26 588**	**26 588**
2021թ հունվարի 1-ի դրությամբ	**26 588**	**26 588**
Տարվա արդյունք	48 366	48 366
2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**74 954**	**74 954**

Տնօրեն՝ Ք.Դավթյան

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 8-19)

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ	2021թ	2020թ
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	**22 820**	**19 471**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	39 536	20 414
Ստացված դրամաշնորհներ և նվիրատվություններ	145 608	84 741
Այլ մուտքեր	41	562
Ապրանքների ձեռքբերման, աշխատանքների, ծառայությունների ստացման համար վճարված դրամական միջոցներ	(16 894)	(2 796)
Աշխատակիցներին և նրանց անունից վճարված դրամական միջոցներ	(28 321)	(11 042)
Բյուջե վճարված դրամական միջոցներ	(5 123)	(9 999)
Տրված դրամաշնորհներ	(76 983)	(62 435)
Այլ վճարումներ	(10 229)	(7 930)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**47 635**	**11 515**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ոչ ընթացիկ նյութական ակտիվների ձեռք բերման գծով ելքեր	(41 214)	(9 395)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(41 214)**	**(9 395)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված վարկերից և փոխառություններից	-	-
Ստացված վարկերի և փոխառությունների մարումներ	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**6 421**	**2 120**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(3 930)	1 229
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	**25 311**	**22 820**

Տնօրեն՝ Ք.Դավթյան

Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ միասին: (էջ 8-19)

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Հիմնադրամի մասին

«Ականազերծման և ռեհաբիլիտացիայի» հիմնադրամը (Հիմնադրամ) հիմնադիրների կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է հումանիտար ականազերծման և այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադրամը հիմնադրվել է 2013թ. դեկտեմբերի 19-ին, հիմնադիրների միաձայն որոշմամբ և գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ միջազգային պայմանագրերի, սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի համաձայն:

Հիմնադրամի կանոնադրությունը գրանցվել է ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից, գրանցման թիվ 222.160.796122 առ 17.01.2014թ. գրանցման վկայական՝ 03Ա 946122: Հարկային հաշվառման համարն է 02624482:

Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ 0010, ք.Երևան, Հանրապետության փ., 67շ.:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են.

- Հոգաբարձուների խորհուրդը (Խորհուրդ)
- Հիմնադրամի գործադիր տնօրենը:

Խորհուրդը բաղկացած է երեք անդամներից: Հիմնադրամի գործադիր տնօրենն է Քնարիկ Դավթյանը: 31.12.2021թ. դրությամբ Հիմնադրամն ունեցել է 2 աշխատակից: Ֆինանսական հաշվետվությունները ստորագրված են 2022թ. մայիսի 24 -ին:

1.2 Հիմնական գործունեությունը

Հիմնադրամի հիմնական նպատակներն են Հայաստանի Հանրապետության ականապատ տարածքների հումանիտար ականազերծումը, Հայաստանի Հանրապետությունում ժամկետանց կամ կիրառկման համար ոչ պիտանի՝ ռազմական նշանակություն ունեցող արտադրանքի, դրանց լիցքերի, կրիչների, գործարկիչների, բաղադրիչների, համալրող ապրանքների և վնասակար թափոնների ու նյութերի ուտիլիզացման, ոչնչացման և կոնսերվացման աշխատանքների իրականացումը: Հիմնադրամն անձամբ իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն և իրավունք ունի զբաղվել միայն կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության տեսակներով: Հիմնադրամի կողմից անձամբ իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակներն են՝

- ականազերծման և պատերազմի պայթուցիկ մնացորդների ոչնչացման աշխատանքներ,
- ժամկետանց զինամթերքի և ռազմական տեխնիկայի ուտիլիզացման, ոչնչացման և կոնսերվացման աշխատանքներ,
- խորհրդատվական, հետազոտական, նախագծային աշխատանքներ, մասնագիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- մասնագիտական շնաբուծություն,
- մասնագիտական հանդերձանքի, պիտույքների, պարագաների, ապրք-ապրքավորումների ներկրում և մատակարարում:

Հիմնադրամը ձեռնարկատիրական գործունեություն իրականացնում է միայն այն դեպքում, երբ դա համապատասխանում է և (կամ) ծառայում է իր կանոնադրական նպատակներին:

2.Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՓՄԿ-ի ՖՀՄՍ) պահանջների համաձայն: Ներկայումս ՓՄԿ-ի ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացման հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար: Եթե ՓՄԿ-ի ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՓՄԿ-ի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմքերի»:

2.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը (դրամ): Այն հանդիսանում է նաև Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կայացնի գնահատումներ և ենթադրություններ կատարի,որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների,ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

3.Նշանակալի հայցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

3.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի վերակապիտալացման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, նեղառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարտիակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցի մաշվածության հաշվարկումը սկսվում է, երբ այն մատչելի է շահագործման համար, այսինքն, երբ հիմնական միջոցի գտնվելու վայրը և վիճակը ապահովում են նրա շահագործումը Հիմնադրամի մտադրություններին համապատասխան: Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացառությամբ եթե այն ներառվել է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Հիմնական միջոցների համար սահմանված օգտակար ծառայության ժամկետներն են.

ապրանքանշաններ	*5-8 տարի*
արտադրատնտեսական գույք	*4 -8 տարի*
հաշվողական և համակարգչային տեխնիկա	*1-5 տարի*

3.2 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝կիրառելով գծային մեթոդը:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Համակարգչային ծրագրեր	*3-10 տարի*

Ոչ նյութական ակտիվն ապաճանաչվում է օտարման ժամանակ,կամ երբ օգտագործումից կամ օտարումից այլևս սպասվող տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ կորուստը ,որը չափվում է որպես օտարումից զուտ մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն,ճանաչվում է շահույթում կամ վնասում,երբ այդ ակտիվն ապաճանաչվում է:

3.3 Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար ֆունկցիոնալ արժույթից տարբերվող այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված՝ արտարժութային շուկա ներում արտարժույթի նկատմամբ հայկական դրամի միջին փոխարժեքով

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը, սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային

հոդվածները պետք է վերահաշվարկվեն իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Փոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

3.4 Դրամական միջոցներ և համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկի հաշվարկային հաշվում ունեցած միջոցները, ինչպես նաև երեք ամիս և պակաս ժամկետայնությամբ ընթացիկ ավանդները ու այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումները:

3.5 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և հնարավոր իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների հնարավոր իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքի որոշվում է «առաջին մուտք՝ առաջին ելք» ԱՄԱԵ բանաձևով: Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ ծրա•ների համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հատակ առանձնացման միջոցով:

Երբ պաշարները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

3.6 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները), և պարգևավճարները:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:

3.7 Հասույթ

Հիմնադրամը հասույթը պետք է չափի ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը հաշվի է առնում Հիմնադրամի կողմից տրամադրվող ցանկացած առևտրական զեղչերի, ժամկետից շուտ վճարման զեղչերի և քանակային զիջումների գումարները:

Հիմնադրամի հասույթում պետք է ներառի ստացված կամ ստացվելիք տնտեսական օգուտների միայն այն համախառն ներհոսքը, որը պատկանում է տվյալ Հիմնադրամին: Հիմնադրամի հասույթում չպետք է ներառի երրորդ անձանց անունից հավաքագրված բոլոր գումարները, օրինակ՝ վաճառքից հարկերը, ապրանքների և ծառայությունների գծով հարկերը և ավելացված արժեքի հարկը:

3.8 Շնորհներ

Հիմնադրամը որպես շնորհ հաշվառում է հիմնադրից ստացված միջոցները, որոնք ճանաչվում և չափվում են իրական արժեքով:

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ կա հիմնավորված երաշխիք,որ Հիմնադրամը կատարելու է դրան կից պայմանները և, որ շնորհը ստացվելու է:

Շնորհները ճանաչվում են որպես եկամուտ սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Հիմնադրամը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները: Երբ շնորհը վերաբերում է ակտիվներին, այն ճանաչվում է որպես հետաձգված եկամուտ և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառվում է հավասարաչափ գումարներով՝ համապատասխան ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում:

Շնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է Հիմնադրամին տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

3.9 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորությունները ապահաճախվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Երբ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է, Հիմնադրամը պետք է այն չափի գործարքի գնով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները):

Հիմնադրամի ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 17 -ում:

3.10 Ակտիվների արժեզրկում

Արժեզրկումից կորուստը առաջանում է, երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա վոխհատուցվող գումարը: Ակտիվի վոխհատուցվող գումարը դրա իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնն է:

Իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումները, ակտիվի վաճառքից առացվող գումարն է՝ իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «անկախ կողմերի միջև գործարքում»՝ հանած օտարման ծախսումները:

Օգտագործման արժեքը ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքն է, որն ակնկալվում է առանալ ակտիվից:

Հիմնադրամը յուրաքանչյուր հաշվեառու ամսաթվի դրությամբ պետք է գնահատի՝ առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե առկա է որևէ այդպիսի հայտանիշ, ապա Հիմնադրամը պետք է գնահատի ակտիվի վոխհատուցվող գումարը: Եթե արժեզրկման որևէ հայտանիշ չկա, ապա անհրաժեշտ չէ գնահատել վոխհատուցվող գումարը:

Հիմնադրամը արժեզրկումից կորուսը պետք է անմիջապես ճանաչի շահույթում կամ վնասում:

Հիմնադրամը յուրաքանչյուր հաշվեառու ամսաթվի դրությամբ պետք է գնահատի, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի հնարավոր է, որ նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուսը այլևս գոյություն չունի կամ նվազել է:

Հիմնադրամը արժեզրկումից կորուստի հակադարձումը անմիջապես պետք է ճանաչի շահույթում կամ վնասում:

3.11 Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվեառությունում ճանաչվում է, երբ Հիմնադրամը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար: Զեղչման դրույքը պետք է լինի այն դրույքը՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատականները:

Յուրաքանչյուր հաշվեառու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ ընթացիկ լավագույն գնահատականը արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվեառություններում,բայց բացահայտվում են,երբ տնտեսական օգուտների մուտքը հավանական է համարվում:

Պայմանական պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվեառություններում այն դեպքում,երբ հավանական է պարտավորությունը լուծելու համար տնտեսական օգուտների արտահոսք և այդ արտահոսքը կարող է խիստորեն գնահատվել:Դրանք բացահայտվում են այնքան ժամանակ,մինչև տնտեսական օգուտները մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է:

4. Հիմնական միջոցներ

Հազար ՀՀ դրամ	Հաշվողական և համակարգչային տեխնիկա	Տրանսպորտային միջոցներ	Տնտեսական գույք,այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Առ 1 հունվարի 2020թ.	**-**	**-**	**625**	**625**
Ավելացումներ	570	8 970	752	10 292
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**570**	**8 970**	**1 377**	**10 917**
Առ 1 հունվարի 2021թ.	**570**	**8 970**	**1 377**	**10 917**
Ավելացումներ	9 211	32 209	345	41 765
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**9 781**	**41 179**	**1 722**	**52 682**
Կուտակված մաշվածություն				
Առ 1 հունվարի 2020թ.	-	-	**625**	**625**
Ավելացումներ	208	115	45	368
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**208**	**115**	**670**	**993**
Առ 1 հունվարի 2021թ.	**208**	**115**	**670**	**993**
Ավելացումներ	1 233	1 919	68	3 220
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**1 441**	**2 034**	**738**	**4 213**
Զուտ հաշվեկշռային արժեք				
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	**362**	**8 855**	**707**	**9 924**
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	**8 340**	**39 145**	**984**	**48 469**

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չունի գրավադրված հիմնական միջոցներ:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի լրիվ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմել է 1 215 հազար ՀՀ դրամ,իսկ 2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 625 հազար ՀՀ դրամ:

5. Պաշարներ

Հազար ՀՀ դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք և նյութեր	167	698
Վառելիքի կտրոններ	1 098	334
Այլ	7 098	375
Ընդամենը	**8 363**	**1 407**

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չունի գրավադրված պաշարներ: Պաշարները ներկայացված են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

6. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	964	-
Տրված ընթացիկ կանխավճարներ	790	-
	1 754	-

7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային մնացորդ դրամով	22 082	15 237
Բանկային մնացորդ արտարժույթով	3 226	7 580
Կանխիկ միջոցներ	3	3
	25 311	**22 820**

8. Շնորհներ

Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար ՀՀ դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հունվարի 1-ի դրությամբ	**2 478**	-
Տարվա ընթացքում ստացված	140 548	84 741
Համապատասխան ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառված	(139 213)	(82 263)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**3 813**	**2 478**

Դրամաշնորհային համաձայնագիրը կնքվել է ՆԱՏՕ-ի Աջակցության և Գնումների գործակալության հետ՝ 440000 Եվրո ընդհանուր արժեքով, 24 ամիս տևողությամբ և նախատեսվում է ՀՀ սահմանամերձ մարզերում պատերազմի պայթեւնավտանգ մնացորդների և ականների ռիսկի կրթական ծրագրերի իրականացման համար: 2020թ նշված կրթական ծրագրերը իրականացնելու համար Հիմնադրամի կողմից 62435 Հազար ՀՀ դրամի չափով տրամադրվել է դրամաշնորհ «Հայկական Կարմիր Խաչի ընկերություն» հասարակական կազմակերպությանը, իսկ 2021թ՝ 76983 Հազար ՀՀ դրամ:2021թ Դրամաշնորհային համաձայնագրեր են կնքվել նաև Հայաստանում Ճապոնիայի դեսպանատան հետ՝ 76720 Դոլար ընդհանուր արժեքով և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ՝ 4820 Հազար ՀՀ դրամի չափով:

9. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտք գնումների գծով	59	54
Պարտքեր հարկերի եւ այլ պարտադիր վճարների գծով՝ բացառությամբ շահութահարկի	50	351
Պարտքեր աշխատավարձի վճարման գծով	104	529
Պարտքեր աշխատակիցներին առհաշիվ գումարների գծով	6	-
Պարտքեր վարձակալության գծով	2	133
	221	**1 067**

10. Պահուստներ

Հազար ՀՀ դրամ	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վաստակած արձակուրդային գծով պահուստ	2 555	1 317
	2 555	**1 317**

11. Հասույթ, վաճառքի ինքնարժեք

Հասույթ

Հազար ՀՀ դրամ	2021թ	2020թ
Ծառայությունների իրացումից հասույթ	40 500	19 748
	40 500	**19 748**

Վաճառքի ինքնարժեք

Հազար ՀՀ դրամ	2021թ	2020թ
Աշխատանքի վճարման ծախսումներ	13 178	3 370
Ուղղակի նյութական ծախսումներ	7 152	5 007
Մաշվածության գծով ծախսումներ	968	-
Այլ ծախսումներ	3 700	-
	24 998	**8 377**

12. Վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2021թ	2020թ
Աշխատանքի վճարման ծախսեր	16 382	13 404
Մաշվածության գծով ծախսեր	2 252	456
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	4 136	3370
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	300	229
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	333	196
Առուիտորական ծախսեր	480	350
Բանկային ծառայության և ապահովության ծախսեր	525	62
Այլ	2 841	100
	27 249	**18 167**

13 Գործառնական այլ եկամուտներ և ծախսեր

Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2021թ	2020թ
Շնորհներից և անհատույց ստացումներից եկամուտներ	144 273	82 822
Այլ	563	666
	144 836	**83 488**

Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2021թ	2020թ
Տրված դրամշնորհներ	76 983	62 435
Արտարժույթի փոխարկման ծախսեր	1782	349
Այլ	25	-
	78 790	**62 784**

14. Ֆինանսական եկամուտներ և ֆինանսական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2021թ	2020թ
Ֆինանսական եկամուտներ		
Բանկային հաշվի մնացորդից ստացված տոկոսներ	36	2
Արտարժույթի վոխարժեքային տարբերություններից օգուտներ	968	1229
	1 004	**1 231**
Ֆինանսական ծախսեր		
Արտարժույթի վոխարժեքային տարբերություններից կորուստներ	4 346	-
	4 346	-

15. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են

Հազար ՀՀ դրամ	**2021թ**	**2020թ**
Ընթացիկ շահութահարկ՝		
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	2 814	2 921
Հետաձգված հարկեր		
Ժամանակային տարբերությունների ծագում և հակադարձում	(223)	(157)
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված շահութահարկի գծով ծախս / (օգուտ)	**2 591**	**2 764**

16. Հետաձգված հարկ

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ / (պարտավորություններ)

Հազար ՀՀ դրամ	**Հետաձգված հարկային ակտիվներ**		**Հետաձգված հարկային պարտավորություններ**		**Զուտ հետաձգված հարկ**	
	2021թ	**2020թ**	**2021թ**	**2020թ**	**2021թ**	**2020թ**
Վաստակած արձակուրդային գծով պահուստ	460	237	-	-	460	237
	460	**237**	-	-	**460**	**237**

Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում ներկայացված է ստորև

Հազար ՀՀ դրամ	**2020թ հունվարի 1-ի դրությամբ**	**Ֆինանսական արդյունքներում ճանաչված**	**2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ**	**Ֆինանսական արդյունքներում ճանաչված**	**2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ**
Վաստակած արձակուրդային գծով պահուստ	63	174	237	223	460
Զուտ հետաձգված հարկ	**63**	**174**	**237**	**223**	**460**

17. Ֆինանսական գործիքներ

Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.9-ում:

Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	964	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	25 311	22 820
	26 275	**22 820**

Ֆինանսական պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտք գնումների գծով	61	187
	61	187

18. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերի:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Հիմնադրամի գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է արտարժութային, առկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը:

Արտարժութային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Հիմնադրամի ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված վաճառքների, ձեռքբերումների և վարկառությունների հետ: Արտարժույթի ռիսկ հիմնականում առաջացնում է եվրոն: Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև:

Հոդված 2021թ.	**Եվրո՝ ՀՀ դրամով վերահաշվարկված**
Ֆինանսական ակտիվներ	
Առևտրային դեբիտորական պարտքեր	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3 226
Ֆինանսական պարտավորություններ	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	
Զուտ արդյունք	**3 226**

Հոդված 2020թ.	Եվրո՝ ՀՀ դրամով վերահաշվարկված
Ֆինանսական ակտիվներ	
Առևտրային դեբիտորական պարտքեր	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7 580
Ֆինանսական պարտավորություններ	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-
Զուտ արդյունք	**7 580**

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները՝

	2021թ	2020թ
ԱՄՆ դոլար	480,14	522,59
Եվրո	522,59	641,11

Զգայունության վերլուծություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ Եվրոյի նկատմամբ դրամի 10% (2020թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2020թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2020թ.՝ 10%): Բացասական ցուցանիշը նվազում է վկայում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և սեփական կապիտալում, երբ դրամն արժեզրկվում է համապատասխան արժույթի նկատմամբ:

	Սեփական կապիտալ	Շահույթ կամ վնաս
2021թ		
Եվրո (10% ամրապնդում)	323	323
2020թ		
Եվրո (10% ամրապնդում)	758	758

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում տրված փոխառությունների և ստացված վարկերի ու փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Հաշվետու ժամանակաշրջանի ավարտին Հիմնադրամը չի ունեցել տոկոսային ռիսկի ենթակա ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Հիմնադրամի նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերի և այլ անձանց տրված փոխառությունների գծով: Պարտավորությունների կատարման գծով ռիսկերի գնահատումներ իրականացվում են որոշակի սահմանները գերազանցող գումարներ պահանջող հաճախորդների համար, բացառությամբ կապակցված կողմերի:

Ենթարկվածություն պարտքային ռիսկին

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը:

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2021թ	2020թ
Առևտրային դեբիտորական պարտքեր	964	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	25 311	22 820
	26 275	**22 820**

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Հիմնադրամը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Հիմնադրամի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Հիմնադրամի համբավը վտանգելու:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը, ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության: Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

2021թ

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	0-12 ամիս	1-2 տարի
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	61	61	61	-
	61	**61**	**61**	**-**

2020թ

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք	Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	0-12 ամիս	1-2 տարի
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	187	187	187	-
	187	**187**	**187**	**-**

Իրական արժեք

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

19. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Այս ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ի ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա առավելագույն էական ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած կարևոր դատողությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- *Ծանոթագրություն 3,1 և 4 – հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը*

20. Պայմանականություններ

Հարկային միջավայր

Հայաստանի Հանրապետության հարկային, արժութային և մաքսային օրենսդրությունը պարբերաբար տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների առարկա է հանդիսանում: Հարկային մարմինները կարող են ավելի խիստ

դիրքորոշում ընդունել օրենսդրության մեկնաբանությունների և գնահատման գծով, որի արդյունքում հնարավոր է, որ այն գործարքների և գործնեության հարկային հաշվառման նկատմամբ վերաբերմունքը փոխվի, որոնց նախկինում հարկային մարմինները չէին անդրադարձել: Որպես այդպիսին լրացուցիչ հարկերը, տույժերը և տուգանքները կարող են հարկային մարմինների կողմից հաշվարկվել:

Հիմնադրամը գտնում է ,որ 2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը պատշաճ կերպով էր կատարում համապատասխան օրենքների պահանջները և Հիմնադրամի հարկային, արժութային և մաքսային դրությունը կայուն է:

Դատական վարույթներ

Հիմնադրամը ներգրավված չէ դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ իր ֆինանսական վիճակի վրա:

21. Գործարքներ կապակցված կողմերի միջև

Գործարքներ ղեկավարության հետ

Հազար ՀՀ դրամ	2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Աշխատավարձ	7 685	6 952
	7 685	**6 952**

22. Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցող դեպքեր

Ճշգրտվող դեպքեր դեպքեր հաշվետու ամսաթվից հետո (31.12.2021թ) մինչև ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթիվը՝ (24.05.2022թ) տեղի չեն ունեցել:

Տնօրեն՝ Ք.Դավթյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 23.06.2022 15:38